|----|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|
| 1 | Արարատ |
| 2 | Արարատ |
| 3 | Արարատ |
| 4 | Արարատ |
| 5 | Արարատ |
| 6 | Արարատ |
| 7 | Արարատ |
| 8 | Արարատ |
| 9 | Արարատ |
| 10 | Արարատ |
| 11 | Արարատ |
| 12 | Արարատ |
| 13 | Արարատ |
| 14 | Արարատ |

15 • Զուլըստ
16 • Վանաբ

Զուլըստ
Վանաբ

Բասեան գաւառի մէջն է Հասանդալէ ,
որ պարսպապատ քաղաք է : Սորա մօտն է
եօթնակամար քարաշէն կամուրջը , որ ըստ
աւանդութեան մի հովիւ շինած է , ուստի և
Զօպան Քօրփուսու կ'ըսուի :

Բագրեանդ գաւառի մէջն է Նպատ լեռ ,
որոյ քօվն է Ծիրու գաշտը , ուր Պապայ և
Մեհրուժանի անուանի պատերազմը եղաւ ,
Քաղաքներէն նշանաւորներ են՝ Վաղարշապոտ
(Թօփրաք-գալէ) , որ այժմ ամուր բերդաքա-
զաք է : Այս գաւառի մէջն էին նաև՝ Բագրա-
ւան և Զարեհաւան քաղաքները :

Արշարունիք գաւառի մէջ անուանի էին
Երուանդակերտ և Երուանդաշատ թագաւորա-
նիստ մայրաքաղաքը , որ այժմ աւերակ է :

Կոդովիտ գաւառի մէջն է՝ Ցարօնք անա-
ռիկ բերդը , որ այժմ Պէյազիտ կ'ըսուի : Սորա
մէջ թաղուած են բազրատունեաց իշխաններէն
շատերը : Սորա մօտն է նաև Աբծափ բերդա-
քաղաքը :

Կոտայք գաւառի նշանաւոր քաղաքն է՝ Ե-
րևան , շինուած Հրազդան գետափի վրայ ա-

մուր պարիսպներով . այժմ նշանաւոր վաճա-
ռաշահ քաղաք է և 14,000 բնակիչ ունի :

Արագածոտն գաւառի մէջ անուանի էին
Օշական և Աշտարակ գիւղերը , նաև Սուրբ
Գրիգորի վանք , Սաղմոսավանք և Սուրբ Գէոր-
գայ վանք 'ի Մուղնի :

Շիրակ գաւառի Երևելի քաղաքն է Անի ,
որ Բագրատունի թագաւորութեան մայրաքա-
զաքն էր , զարդարուած հոյակապ ու նշանա-
ւոր շէնքերով , ամուր պարիսպներով և բաղ-
մաթիւ եկեղեցներով , յորս անուանի էր Մայր
Եկեղեցին , որ այժմ կիսակործան կը մնայ և
քաղաքն էլ անմարդաբնակ : Այս գաւառի
մէջն է այժմ Աղեքսանդրապոլ (Կիւմրի) որ
նշանաւոր ու վաճառաշահ քաղաք է 20,000
բնակիչով :

Վանանդ գաւառի մէջն է Կարս , ուր
տամներորդ դարուն փոքրիկ թագաւորու-
թիւն մի սկսեց և ըսուեցաւ թագաւորութիւն
կարուց : Այս քաղաքը այժմ ամուր բերդա-
քաղաք է :

Արարատ նահանգին մէջ 'ի հնումն նշանա-
ւոր էին նաև Արմաւիր , Դուին և Արտաշատ
քաղաքներ , որոնք այժմ աւերակ են :

1—Արաբար նահանջը Հայուսուանի սոր նոտքուորունեւան
էրին էր : ի՞նչ էր լեռները ու ուղղվը կան իւր մէջ :
Ո՞ւ է այժմ ամենայն Հայոց Կայունութիւնն և սոր կը նայի :

2—Այս նահանջի ամենաները սոր նոր էն , ի՞նչպէս է իւր
ուրախքեռնեւան : ի՞նչ նշանաւոր լեռներ , էլիսար և ու-
ժանդակական գեղեցք ու անօտանի ուղղութը կան իւր մէջ : Ու-
շո՞նո՞ւն են այս նահանջի լոյցի և ընդունի հինդաններ , նշա-
նաներ և ի՞նչ հանուներ առնի :

3—Արաբար նահանջը ունի բաւառի բայնաւոշի :
ի՞նչ նշանաւոր գեղեցք , լանիւր ու առաջներ կան իւր բա-
ւառաց մէջ և անօտանի որո՞նո՞ւ ոյժմ շնոր կամ անօրդունուի էն :

Բ. ՓՈՔՐ ՀԱՅՔ

1—Փոքր Հայոց սահմանակից են արեւել-
քէն՝ Մեծ Հայք . հարաւէն՝ Միջագետք Հայ-
ոց և կիլիկիա . արեւմուտքէն՝ Փոքր Ասիոյ ա-
րեւմուտան մասը . իսկ հիւսիսէն՝ Սեաւ ծով :

Հայաստանի այս մասը կը կազմէ մի բնդ-
արձակ լեռնադաշտ , որ բարեբեր հող և ա-
ռատ ջրեր ունի ու շրջապատուած է Տորոսի,
Պարիսարեան և Պանտոսի լեռանց շղթաներով ,
մէջտեղէն էլ Անտիտորոսի շղթայն՝ որ այս եր-
կիքը երկու հաւասար մասերու կը բաժնէ՝
արեւելեան և արեւմուտան :

Փոքր Հայքը բաժնուած է Երեք գլխա-
ւոր մասերու՝ Առաջին Հայք , Երկրորդ Հայք ,
Երրորդ Հայք :

Ա. ԱՌԱՋԻՆ ՀԱՅՔ

2—Առաջին Հայքը կինույ Փոքր Հայոց ա-
րեւմուտան կողմը : Նշանաւոր քաղաքներն են՝
Մաժակ կամ կեսարիա , Հայաստանի ամենա-
հին քաղաքներէն մէկը , որ մեր Արամնահա-
պետի Մշակ անուն կուսակալը շինեց . քրիս-
տոսէ 2,000 տարի առաջ և իւր անուամբ Մը-
շակ անուանեց : կեսարիա այժմ վաճառաշահ
քաղաք է և կոստի բաղմաթիւ գործարաններ
աւնի :

Երդոկիա կամ Թողարկուած . իրիս գետի վրայ
շինուած . վաճառաշահ և արհեստներով ծաղ-
կած քաղաք է :

Առաջին Հայոց մէջ նշանաւոր են նաև՝
Նիկոպոլիս , Զիլէ և Նիկոմար քաղաքները :

Բ. ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅՔ

3—Երկրորդ Հայքը Բարձր Հայոց և Ծո-
փաց արեւմտակողմն է : Քաղաքներէն նշանա-
ւոր են՝ Սերաստիա կամ Սվաղ , Ալիս գետափի
վրայ շինուած , վաճառաշահ ու արհեստներով

ՓՈՒՔՐ ՀԱՅՐ
ՀԻՒՄԱՆ

• Ա. Խամիս Իրեա ○ Զերովիս (Թուառ)	• Ա. Խիմիադր Էլեմենտ	• Ա. Խորովովիս Խորով	• Ա. Խունչաց Խունչ
Ա. Խ. Զ. Խ. Ն. ○ Կեսարիս (Վայու) ○ Շականչ	• Ա. Խ. Զ. Խ. Բ. ○ Կեսարիս (Վայու)	• Ա. Խ. Զ. Խ. Բ. ○ Գեղուն ○ Վարուաստ	• Ա. Խ. Զ. Խ. Բ. ○ Կերպինչ ○ Սելիումինչ (Մալուխ)
8 - r - - L. b -	8 - r - - L. b -	8 - r - - L. b -	ՀԱՐԱՀ
• Ա. Խ. Խ. Բ. Խ. Բ. Խ. Բ.	• Ա. Խ. Խ. Բ. Խ. Բ. Խ. Բ.	• Ա. Խ. Խ. Բ. Խ. Բ. Խ. Բ.	• Ա. Խ. Խ. Բ. Խ. Բ. Խ. Բ.

ԱՐԵՒՄԱՒՏՔ

(61)

Ժաղկեալ քաղաք է : Սորա շուրջը՝ դաճի ,
մարմարի և աղի հարուստ հանքեր կան :

Տարանտա , Սեբաստիոյ հարաւակողմը ,
Կիւրիւն , Ակն և Արապկեր քաղաքները :

Գ . ԵՐՐՈՐԴ ՀԱՅՔ

4—ԵՐՐՈՐԴ ՀԱՅՈՂ սահմանակից են՝ արեւելքէն Եփատ գետ . հարաւէն՝ կիլիկիա .
արևմուտքէն՝ Առաջին Հայք . հիւսիսէն՝ Երկրորդ Հայք : Երևելի քաղաքն է ՄԵԼԻՄԻՆէ
(Մալաթիա) որ ՚ի հնումն բազմամարդ և անուանի քաղաք էր , այժմ 18,000 բնակիչ ունի , նըշանաւոր է բամպակի և տփիոնի վաճառքով :

Երրորդ Հայոց մէջն է ՔԵՍՈՒՆ , Սամուստ ,
որ ՚ի հնումն Երևելի քաղաք էր : Այս վերջինի մէջ գտաւ Սուրբն Մեսրոպ հոյկական տառերը և հիմնեց առաջին ուսումնարանը :

1—Փուր Հայոց սահմանէր որո՞նտ էն . ի՞նչ դէք + սունէ և օր լըրնց շննաւերով շրջապատուած է : Անորդուր լըր Փուր Հայոց օր կոչւը կ'ինայ և զայն ժանի՞ հասէր իւր բամենէ :

2—Ա. Խ. Զ. Խ. Բ. Հայոց օր կոչւ կ'ինայ և ի՞նչ նշնաւոր տալունէր իւն իւր մէջ :

3—Երկրորդ Հայ+ այս երկիր օր կոչւ է և գլեւուր տալունէր որո՞նտ էն :

4—Երբորդ Հայոց ստհմաները որո՞նք են, ի՞նչնչու
շառար ուղղվ կա էր եղաւ: Ստհմանար ուղղվէ Հրայ ի՞նչ
ժերելեւ կա :

Գ. ՄԻԶԱԴԵՑՔ ՀԱՅՈՅ

1—Միջագետաց հիւսիսային մասը իսկզբա-
նէ անտի Հայոց իշխանութեան ներքև լինե-
լուն՝ Միջագետաք Հայոց ըսուեցաւ, ու կինայ
պղնեաց նահանգի հարաւակողմը, եփրատ ու
Տիգրիս գետերու մէջ տեղը:

Այս երկրի հիւսիսակողմը լեռնոտ, իսկ
հարաւային մասը դաշտային է, ուր հողի բա-
րերեւութեամբ ու քաղցր օդով յառաջ կու-
դայ տաք կլիմայի տակ աճող բայցերն ու կեն-
դանիք :

2—Հայոց Միջագետաց գլխաւոր քաղաք-
նեն են՝ Մօքրին (Միախրին) որ ՚ի հնումն թա-
գագորանիւառ քաղաք էր, կրկնակի պարիսպ-
ներով ամրացած : Աւելի հոյակապ ու փառա-
ւոր շենքեր այլ այժմ աւերակ է ու շենքերէն
հազիւ մի քանիսը կիսակործան կը մնան :

Երեսիւա կամ Ռուհա, Հայոց թագաւորա-
նիստ մայրաքաղաք էր, գեղեցիկ շենքերով
ու հղօր պարիսպներով շրջապատած : Այժմ
ևս նշանաւոր վաճառաշահ քաղաք է արհեստ-

ՄԻԶԱԴԵՑՔ ՀԱՅՈՅ ՀԱՐԱՐԱ

• Աւանդութ	• Սկզբանին
• Աւանդութ	• Թէղութեան ձեղութեան
• Վիւան	• Քարաքեօփորու
• Եղեսիւա (լուսնա)	• Քոչկարո
• Զարմէլիք օ կարմւան	• Մծրին
• Կըուն	(Մէջիւն)
• Բիրուս	• Խառան
(Պէտքիւն)	Կարշաք առաջ

ներով ծաղկած։ Ունի 40,000 բնակիչ, որոյ
մեծագոյն մասը քրիստոնեաներ են։

Մէրտին, լեռան վրայ շինուած ամուր քա-
ղաք է։ Նշանաւոր են նաև թիրտա (Պիլէճիկ)
Հայոց թագաւորներէն շինուած, Սևաւերակ,
Ռաքքա և Խառան քաղաքներ։

1—Մէջութեաց ո՞ր մասին Հայոց Թէշտեր+ կ'ըսուեր։
Ա-հաններ որո՞ւն են։ Ի՞նչ դիր+ ունի և ի՞նչեւ է ոյ-
ւուր պառավերութիւն։

2—Հայոց Մէջութեաց էլեւուոր +աղուներ որո՞ն+ են։
Երեսու ուղուր է՞նչ շնուր ունի և ունի՞ բնուիւ։

Դ. ԿիլիկիԱ.

1—Հայաստանի ուհամաններէն դուրս կի-
լիկիոյ երկրին մէջ սկսաւ Հայոց Ռուբինեանց
տէրութիւնը, ու այն օրից կիլիկիան Հայաս-
տանի մի մասը կը համարուի։

Կիլիկիայի սահմանն է արևելքէն՝ Եփրատ
դետը. հարաւէն՝ Միջերկրական ծով. արե-
մուտքէն՝ Տորոսի արևմտեան ճիւղերը. հիւսի-
սէն Փոքր Հայք։

Այս երկրի հարաւային ծովելերեայ մասը
դաշտային է, իսկ հիւսիսային մասը Տորոս լե-
ռան շղթայով պատած։ Դաշտային կիլիկիոյ

օդը ամարան մէջ տաք ու վատառողջ է, այլ
հողը խիստ բարեբեր և կը բուսցնէ ջերմ կի-
մայի տակ աճող ամեն բոյսերը, որոցմէ նշա-
նաւոր են՝ արմաւ, թուրինջ, նարինջ, լիմոն,
ձիթապտուզ, նուռ և առատ բամպակ. կեն-
դանիներէն կան՝ ոչխար, այծեամ, գոմէջ, ձի,
կոլ և. իսկ հանքերէն՝ երկաթ, աղ, ծծումբ,
արծաթ և հանքային ածուխ։ Ունի առատ
ջրեր, մեծ ու ողողող գետեր և ջերմուկները,

2—Կիլիկիա իւր ճոխ ժամանակներու մէջ
400-ի մօտ քաղաքներ և անմատչելի բերդեր
ունէր, հազարէն աւելի ամրոց, որոց մեծա-
գոյն մասը այժմ աւերակ դարձած է։ Գլխա-
ւոր քաղաքներն են՝ Տարսոն, որ հին ու անու-
անի քաղաք է, Միջերկրական ծովի մօտ կուդ-
նոս գետափի վրայ շինուած,

Հին շէնքերէն անուանի են Հայոց թագա-
ւորական պալատն, գանձատունը և սուրբ
Սոփիա եկեղեցին, ուր մեծն լւսն իշխանը թա-
գաւոր օծուեցաւ։ Տարսոն այժմ վաճառաշահ
քաղաք է և 20,000 բնակիչ ունի։

Սիս, Տորոս լեռան ստորոտը շինուած,
Ռուբինեանց տէրութեան մայրաքաղաքն էր,
գեղեցիկ շէնքերով ու ահաւոր պարիսպներով
ամրացած, ՚ի սոցանէ ցարդ կիսակործան կը

Թան թագաւորական պալատն, գանձատուն
և Սուրբ Սովորիա եկեղեցին: Այս տեղը կը նս-
տի կիլիկիոյ Հայոց Կաթոլուղիկոսն որ Ներսէս
Շնորհալոյ յաջորդութիւնն է: Սիս սյժմ 7,000
բնակչի ունի և իւր շրջակայք շատ բարեբեր էն:

Ատանա, իսկզբանէ անտի կիլիկիոյ մեծ
ու անուանի քաղաքներէն մէկն է, Սարոս գե-
տափի վրայ շինուած, սուրա դիրք ցած ու օդը
վատառողջ է, այլ իւր դաշտերն բարեբեր են:

Անարդարա, Ռուբինեանց ժամանակ երե-
սէի բերդաքաղաք էր, այժմ փոքրիկ գիւղ է
փւռամոս գետափի վրայ:

Մարաշ կամ Գերմանիկ կենսարիոյ, Տորոսի
Արևաշդայի վրայ շինուած կիլիկիոյ երեսլի
քաղաքներէն մէկն է: Ունի բարեբեր հող և
առատ պտուղ:

Խսոս կամ Այսա, որ երբեմն երեսլի նա-
ւահանգիստ էր, որոյ ծովածոց վերջէն Հայոց
Մաց լաւեցաւ, ուր կ'երթեեկէին Հնդկաստանի
և Վենետիկոյ վաճառականներ: Այժմ այս
քաղաքը իւր նախնի նշանակութիւնը կորսնցու-
ցած է:

Անթապ, որ իւր հայ բնակչաց ճարտա-
րութեամբ զարգացած վաճառաշահ քաղաք է:

ԱՐԵՒԵԼՔ	ԵՓՐԱՏ	ԴԵՐԱՄ	ԱՅՆ	ԱՐԵՎԵԼՔ								
Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե	Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա
Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե	Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա
Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե	Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա
Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե	Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա	Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա

Զէյթուն, անմատչելի լեռներու մէջ շինուած 2,000 տուն բնակիչով, որ համարեա բոլորն էլ հայ են: Ունի Սուրբ Աստուածածին եկեղեցի ուր Զէյթունի Եպիսկոպոս կը նստի: Այս քաղաքի շրջակայք երկաթի հարուստ հանքեր կան, որոնք տեղացիք մշակելով կը պարապին երկաթագործութեամբ:

Զէյթուն քաղաքի մօտ կ'ինայ Ուլնի աւան և Հաճին:

Կիլիկիոյ մէջ նշանաւոր են նաև Լամբրոն աւան, Բարձր բերդ, Վանկայ բերդ, Հռոմկըլայ և Սեաւ լեռ, որոյ վրայ Ուուրինեանց տէրութեան ժամանակը բաղմաթիւ վանքեր կային: Այս լեռան հարաւակողմն է Դրազարկ երևելի վանքը, որոյ մէջ շատ հայ թագաւորներ և ընտիր վարդապետներ թաղուած են,

1—Կէլէկտան Ե՞րբ Հայութան ըստեցաւ և Ք՞նչ է դուռճառը: Կէլէկտան սահմաններ որո՞նտ են: Ի՞նչ դէք+ անէ այս երկերը, Ք՞նչեւէ իւր օդն ո՞՛ղդպէերունիւնը: Ի՞նչ բոյւէր, էնտանիններ և հասներ կան իւր ժշ:

2—Կէլէկտան իւր ճոխ ժամանակը ո՞րո՞նտ ժողու+, բերդ և ամբոց սահներ: Քաղաքներներն որո՞նտ նշանաւոր են և ի՞նչ ժիրելէ+ կայ էրենց վրայ: Ո՞վէ այժմ Կէլէկտան կառաւընուն և ա՞ր իւր նստի: Ու՞ր էինայ Սեաւ լեռ և ի՞նչ ժիրելէ+ կայ սորու և Դրազարկի չանէէ վրայ:

Մ Ա Ս Ն Գ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

1—Հայ աղդը իւր անկախութիւնը կորմնցնելէ յետոյ Հայաստանը զանազան ժամանակ զանազան իշխանութեանց և փոփոխութեանց ենթարկեցաւ: Այժմ էլ երեք տէրութեանց սահմաններու մէջ լինալով, երեք մաս բաժնուած է՝ Օսմաննեան Հայաստան, Ուուսի Հայաստան, Պարսից Հայաստան:

Ա . ՕՍՄԱՆՆԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

2—Օսմաննեան Հայաստանը կը պարունակէ Մեծ Հայոց Բարձր Հայք, Չորրորդ Հայք, Աղձնիք, Մոկք, Կորճեայք, Տուրուքերան և Վասպուրականի արևմտեան մասը: Հարաւ, արևմտեան կողմէն՝ Փոքր Հայք, Միջազետք Հայոց և Կիլիկիա, որք ընդ ամենը 7,500,000

բնակիչ ունի , որոցմէ 1,500,000 Հայեր են ,
Օսմանեան Հայաստանը Ուստ Հայաստանից կը
բաժնուի Մասիս , Բաղդազ , Ջրաբաշի և Պար-
իսար լեռներով : Պարսկաստանից՝ Բուժունեաց ,
Սեւ լեռանց և Զուխ լեռանց շղթաներով :

Օսմանեան Հայաստանը մի քանի նահանգ-
ներու՝ կուսակալութեանց , նահանգներն ել
գաւառներու՝ Միթէսարիֆութեանց բաժնո-
ւած է , որք առ հարկին կը փոփոխուին և նոր
բաժանումներ կունենան :

Մեծ Հայքը այժմ հետեւեալ կուսակալու-
թեանց բաժնուած է :

Ա . Կարնոյ կամ Էրդրումի կուսակալութիւն .

Բ . Վանայ կուսակալութիւն .

Գ . Հէքարիի կուսակալութիւն .

Դ . Բաղէշի կուսակալութիւն .

Ե . Տիգրանտեկերտի կամ Տիարպէքիրի կու-
սակալութիւն .

Զ . Խարբերդի գլխաւոր Միթէսէրիֆութիւն .

Ա . ԱԱՐՆՈՅ կոխսպահութիւնը .

Յ—Կարնոյ նահանգը իւր նշանաւոր դիրքութ-
թիւրքիոյ Հայաստանի բարձր ու գլխաւոր
կուսակալութեան տեղն է և կը կազմէ հին-

Հայաստանի բարձր Հայք և Յուրուբերանի
հիւս . արևմտեան մասը : Այս նահանգը մեծա-
մեծ լեռներ , առատ ջուր , քնտիր և բարեբեր
հողեր ունի , որոց մէջ նշանաւոր են կարնոյ և
Երզնկայի գաշտեր , ուր մշակութիւնը ըստ բա-
ւականին յառաջ գացած է : Հարուստ է աղի ,
երկաթի , քարածուխի , ոսկւոյ հանքերով և
հանքային առողջարար ջրերով : Անուանի են
իւր ձին , ոչխարն ու չորին :

Կարնոյ կուսակալութեան բնակչաց մեծ-
մասը Հայ և Թիւրք են . Հայերը հողագործու-
թեան , արհեստներու և վաճառականութեան
կը պարապին . իսկ Թիւրքերը՝ գլխաւորապէտ
քաղաքային պաշտօնեայ և մի մասն ել հողա-
գործ են :

Գլխաւոր քաղաքներն են ,

Կարին (Էրդրում) Օսմանեան Հայաստանի
առաջին վաճառաշահ և գեղեցիկ քաղաքնե-
րէն մէկն է , շրջապատած երկու կարգ ամուր
պարիսպներով և եօթանասուն երկու աշտա-
րակներով : Ունի մօտ 90,000 բնակիչ , որոցմէ
30,000 Հայ են և կը պարապին առաւելապէտ
արհեստներու և վաճառականութեան . Ար-
հեստներէն օր աւուր կը յառաջանայ բամպա-
կադործութիւն , մետաքսագործութիւն , ողլ-

Հագործութիւն և երկաթագործութիւն։ Կարհնը՝ նշանաւոր է նաև իւր առատ ջրերովն, հին ու գեղեցիկ շենքերովն, որոցմէ անուանի են՝ Ռւլու-Ճամի մզկիթը և Զիփթէ մինարէն, որ յաղճապակեայ գոյնզգոյն աղիւմներով շինուած է։ Հայերը ունին սուրբ Աստուածածին անուամբ մի մեծաշէն եկեղեցի, ազգային բարեկարգ վարժարան և առաջնորդարան, ուր կը նստի այս նահանգին Առաջնորդը։ Կարնոյ մէջ նշանաւոր է նաև Սանասարեան վարժարանը, որ 1881-ին Աղա Մկրտիչ Սանասարեանի բարերարութեամբ հիմնուեցաւ։

Սպեր, ամուր բերդաքաղաք է, ձորոխ գետի վրայ շինուած։ Այս քաղաքի շուրջը գեղեցիկ պարտէզներ և այգիներ կան։ Ունի բարեբեր հողերը, առատ մեղրամոմ, ոսկւոյ և պղնձի հարուստ հանքեր։

Բարեբդ, ձորոխ գետի վրայ շինուած ամուր քաղաք է, գեղեցիկ տեսարանով, ունի 9,000 բնակիչ որոցմէ 3,000 հայեր են։

Երգնկա (Երիզա) Եփրատ գետի վրայ շինուած վաճառաշահ և անուանի քաղաք է, 18,000 բնակիչով, որոցմէ 6,000 հայեր են։

Այս նահանգի մէջ նշանաւոր է նաև Կամախ, որ հին ատեն Անի կըսուէր, և Հասան-

ղալայ, որոյ մօտ է Զօպան քեօփրիւսի ըստած եօթնակամար կամուրջը, որ ըստ աւանդութեան մի հովիւ շինած է։

Բ. ՎԱՆԱՅ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

4—Վանայ կուսակալութիւնը կը տարածի վասպուրականի արևմտեան՝ Մոկաց և Կորդուաց արևելեան մասերու վրայ։

Այս նահանգը մեծ մասամբ լեռնոտ է, սորա մէջն է՝ Սիփան, Վարագայ լեռ, Ծնձաքիսար, Արտօս և Առնոս լեռներ ու Մոկաց լերինք։ Ունի ընդարձակ դաշտեր բարեբեր հողերով, որոցմէ նշանաւոր են Ապաղայի դաշտ, Արջակու դաշտ և Գաւազանի դաշտը, այլ մեծ մասամբ անմշակ թողուած։ Կան առատ ջրեր, պտղաբեր և գինեբեր այդիներ ու ընդարձակ անտառ հարաւ. արևմտեան մասերու վրայ։ Կենդանիներէն անուանի են՝ իւր ընտիր ոչխարներ, եղն, գոմէշ, ձի և վայրի զանազան կենդանիներ, որոցմով լի են իւր լեռներ և անտառաց մէջ։ Ունի նաեւ Երկաթի, աղի, քարածուխի, նաւթի և կաւիծի հարուստ հանքեր ու շինութեան ընտիր և յարմարաւոր քարահանք։

Այս նահանգի մէջն է բնոււնեաց կամ
Ազի ծովը, որ երկրի գլխաւոր քաղաքի անու-
ամբ վանայ ծով կ'ըսուի։ Ունի չորս կղզիներ,
Աղթամար, Լիմ, Կտուց և Առտէր որ այժմ
անբնակ է։ Աղթամար կղզւոյ վրայ է համա-
նուն կրօնաւորաց վանքը և սուրբ Խաչի փա-
ռաւոր տաճարը, որը Արծրունի գաղիկ թա-
գաւոր շինեց։ Այս վանուց մէջ կը նստի Աղ-
թամարայ Կաթողիկոսը։

Վանայ նահանգի մէջ նշանաւոր է Վարտ-
պայ սուրբ Նշանի վանքը, Վարագ լեռան սոս-
րուց շինուած։ Այս վանուց մէջ Խրիմեան
Հայութիւն 1857-ին ժառանդաւորաց վարժարան
թանգարան և տպարան մի հաստատեց, որմէ
«Արծուի վասպուրական»։ անուամբ ամսա-
թերթ կը հրատարակէր։ Մնացեալ վանքերէն
անուանի են՝ Նարեկայ վանք, սուրբ Գրիգոր
Նարեկացւոյ անուամբ։ սուրբ Գրիգորի վանք,
Կարմրաւոր և սուրբ Խաչի վանքերը։

Այս նահանգի բնակչաց մեծագոյն մասը
հայեր են, որոց պարապմունքն է՝ արհեստ,
վաճառականութիւն, հողագործութիւն և
անժամարտութութիւն։

Քաղաքներէն նշանաւոր են՝

Վան, համանուն ծովի մօտ շինուած շատ

հին քաղաք է ամսւր բերդով, շրջապատուած
ընդարձակ և գեղեցիկ այգիներով։ Ունի
30,000 բնակիչ, որոցմէ 20,000 հայ են ու կը
պարապին արհեստներով, վաճառականու-
թեամբ մի մասն էլ հողագործութեամբ։ Ար-
հեստներէն օրէ ցօր կը յառաջադիմէ ասրա-
գործութիւն, որոյ համար շատ գործարաններ
բացուած են, ուր կը գործուին ընտիր և
դիմացկուն մանիսաներ։ Նշանաւոր է Վանայ
շալը, Շատախու հայ բնակչաց պիտանի գիւտը,
որ շատ տեղեր ՚ի վաճառ կը տարուի։ Վանայ
բերքերէն յայտնի են՝ իւր բաղմատեսակ պլ-
ատուղներ, նուռ, թուզ, խաղող և գինին որ
առատութեամբ կ'ելլէ։ մեծ քանակութեամբ
՚ի վաճառ կը հանուի՝ կաշի, տառեխ ձուկ,
ընկոյզինոյ կոճղ, բողակ և նժոյգ ձիեր։ Վա-
նայ մէջ կան մեծ և գեղեցիկ շենքեր, պատ-
մական հնութիւններ և բեւեռագիր արձանա-
դըրութիւնք։ Իւր դրից ընդարձակութեան
պատճառաւ ունի աասն երկու եկեղեցի, տաս-
նէն տւելի ծխական և մասնաւոր վարժա-
րաններ, որոց մէջ նշանաւոր է կեդրոնական
վարժարանը։

Այս քաղաքի շրջակայ գիւղորէից մէջ
անուանի է՝ Աւանց գիւղաքաղաքը, որ Վանայ

ծովի նաւահանգիստն է, ուր հարիւրէմաւելի երթևեկող նաւեր կան: Ունի ընդարձակ այշիներ և ծառաստան:

Արտամետ գիւղը՝ վանայ ծովի արևելքան ափի վրայ շինուած գեղեցիկ տեսարանով և ընդարձակ պարուէլներով:

Արճէշ, Արճէշ և իրաթ, վանայ ծովափի մօտ շինուած, ընդարձակ գիւղաքաղաքներ են աւերակ բերդերով. ունին բարեբեր հողեր և առատ բերք:

Գ. ՀԵՔԱՐԻԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

5—Այս կուսակալութեան երկիրը Մոկաց, կործէից արևելքան մասերու և վասպուրականի Ազբակ գաւառի մէջ կինայ: Դիրքը լեռնոտա է, տեղ տեղ փոքր գաշտեր կան բարեր հողերով և ջրերով: Ունի ոչխարաց ընտիր հոտեր և վայրի բազմաթիւ կենդանիք:

Այս նահանգի բնակիչները Ասորի, ֆիւրտի մասամբ Հայ են, առաջները կը պարապին անամնաբութեամբ, մի փոքր մասը հողագործութեամբ, այլ առաւել պարապորդեամնքով. իսկ Հայերը երկրագործութեամբ արհեստներով, Հայ կանայքն էլ ընտիր ձեռագործներով, (գորգ, կապերտ, շալ):

9. Ամառոր քաղաքներն են՝
Պաշտամէ, ուր կը նստի նահանգի կուսակալը, ունի 400 տուն բնակիչ
Պաշտամէի մօտ է սուբր Բարդուղիմէոսի հռչակաւոր վանքը, որ այս գաւառի առաջնորդանիստ տեղն է:

Ճուլամերկի, Ճապ գետափի վրայ շինուած ամուր բերդաքաղաք է, 3.000 տուն բնակիչ ունի: Սորա մօտ է Փօչանիս գիւղը, ուր կը նստի Ասորոց Պատրիարքը (Մարշալին):

Գ. ԲԱՂԵՇԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

6—Բաղեշի կուսակալութիւնը կը տարածի Տուրուբերան նահանգի և Մոկաց Հիւսիսային մասի վրայ: Այս նահանգը կը շրջապատեն արևելքէն: Գրգոռու, Ներբովլի և Սիրան լեռներ, հիւսիսէն Բիւրակնեան լեռ, հարաւէն Խոյթ լեռ և Մոկաց լերինք: Սորա մէջէն կանցնին Եփրատ և Տիգրիս գետեր, որոց կ'օժանագակեն այս երկրի մէծ և փոքր գետեր, յորս նշանաւոր են՝ Մելքառգետ, Խնուռայ գետ, Բաղիշու գետ: Ունի բարերեր գաշտեր, ուր առատօրէն կը բուժնին ցորեն, գարի. նշանաւոր է այս երկրի մեղր, գաղպէն, գղթոր,

ծխախոտ և զանաղան պտուղներ : Կան
սովոյ , արծաթի , երկաթի , նաւթի , ծծումբի
և աղի հարուստ հանքեր :

Գլխաւոր քաղաքներն են՝

Բաղէշ , համանուն գետափի վրայ շինուած
ած ամուր բերդաքաղաք է . այս տեղը կը նս-
աի նահանգի կուսակալը : Բաղէշը ըստ բաւա-
կանին ծաղկած է վաճառականութեամբ և
արհեստներով : Ունի քարաշէն գեղեցիկ տներ ,
վաճառանոցներ և 24,000 բնակիչ , Հայեր ունին
չորս եկեղեցի և աղդային ծխային վարժա-
րաններ եկեղեցեաց և շրջակայ վանքերու ծոց :

Մուշ , Տարօն գաւառի գլխաւոր քաղաքն
է : Ունի 10,000 բնակիչ , որոցմէ 5,000 հայ են :
Այս քաղաքը հինգ թաղերու կը բաժնուի ,
որոց իւրաքանչիւրին մէջ կան մի մի եկեղեցի
և վարժարան : Մուշ նշանաւոր է իրեւ վաճա-
ռաշահ քաղաք , որմէ մեծ քանակութեամբ
կը հանուի ծխախոտ որ անուանի է , նաեւ՝
մեղր , գինի , գազպէ ևա :

Մշյ հիւսակողմն է Ս . Կարապետի հրո-
շակաւոր վանքը , ուր 1867-ին Խրիմեան Հայ-
րիկը հաստատեց թանգարան և տպարան , որ-
մէ «Արծուիկ Տարօնոյ » անուամբ շաբաթա-

թերթ կը հրատարակուէր : Այժմ այս վանուց
մէջ կայ բազմաթիւ միաբանութիւն և ժառան-
գաւորաց բարեկարգ վարժարան :

Ե . ՏԻԴՐԱՆԱԿԵՐՏԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

7—Տիգրանակերտի կուսակալութիւնը կը
բաղկանայ Աղձնեաց , Կորդուաց , Մոկաց արե-
մաեւան , Ծոփաց հարաւային և Երրորդ Հայոց
արեւելան մասերէն :

Այս նահանգի հիւսիս և արեւելոկողմը
լեռնոտ , իսկ հարաւակողմը դաշտային է , ուր
հաղի բարեբերութեամբ և ջերմ օդովն յառաջ
կուդան բազմատեսակ բերքեր և կենդանիք :
Սորա մէջէն կանցնի Եփրատ գետ որուն կ'օ-
ժանդակեն այս երկրի բազմաթիւ վտակներ :
Ունի սովոյ , արծաթի , երկաթի , պղնձի , կա-
պարի , նաւթի , քարածուխի հարուստ հանքեր
և ջերմուկներ :

Գլխաւոր քաղաքներն են՝

Տիգրանակերտ (Տիարպէքիր) . Տիգրիս
գետի վրայ շինուած ընդարձակ և վաճառա-
շահ քաղաք է , լայն ու ամուր պարիսպներով :
Ունի 40,000 բնակիչ մեծաւ մասամբ Քիւրա և
Ասորի : շինքերէն անուանի են կուսակալին

պղալատը և Հայոց Մայր Եկեղեցին : Այս քաղաքը ծաղկած է արհեստաներով, անուանի է իւր բամպակէ, մետաքսէ կտաւն և ոսկեթել հիւստուածները :

Արդանա ամուր բերդաքաղաքէ. Ունի 4,000 բնակիչ, որմէ 1,500 Հայ են : Անուանի է այս քաղաքի այգիներ և ընտիր խաղողն :

Հաղբու, բերդաքաղաքէ, իւր մէջ կը պործախն թանձր գորդեր, կապերտ և զանազան ձեռագործներ :

Աղերա, համանուն գաւառի գլխաւոր քաղաքն է. ունի 9,000 բնակիչ : Այս տասնին

Զ. ԽԱՐԲԵՐԴԻ ՄԻՒԹԷՍԵՐԻ ՄՅՈՒԹԻՒՆ

8—Խարբերդի միւթէսէրի փութիսնը կը բաղկանայ Չորրորդ Հայոց նահանգէն : Այս երկիրը խիստ լեռնոտ է, ունի բարեբեր հողեր և առատ ջուր : Սորա մէջէն կանցնի Եփրատ գետը և զայն երկու մասի կը բաժնէ՝ հիւսիսային և հարաւային : Անուանի է այս քաղաքի բամպակ, խաղաղ և բնտիր գինին : Ունի ոսկեղ, արծաթի, պղնձի և քարածուխի հավքեր :

Գլխաւոր քաղաքներն են՝
Խարբերդ, Եփրատ գետի վրայ շինուած անուանի բերդաքաղաքէ. ունի 20,000 բնակիչ, որոցմէ 8,000 Հայ են : Այս քաղաքի շրջակայք մէջ քանակութեամբ կը մշակուի բամպակ, շերամ: Ունի ընտիր խաղող և գինի բարու, գլխաւոր բերդաքաղաք է Եփրատի վրայ շինուած, որտեղ մէջ կան բարեհամարդիւրներ, իւր շրջակայքն էլ բարեբեր հողեր և առատ պտուղ :

Այս նահանգի մէջ նշանաւոր են նաև Էկիլ, Ճապաղուր, Պօկիան, Ջմչկածագ և Ջարսանճագ, որ չորս փոքր գաւառներ են :

1—Հին Հայուստանը այժմ ո՞ր գերբնաւուանց սահմանները են՝ մէջ կ'ինչ, և աւազանութեանը անչ մաս կը բաժնուի :
2—Օմանեան Հայուստանը հին Հայուստանի ո՞ր նահանգներն են կ'այցնուի : Որպէս է էւր բնույթն էլ Սահմաններ որո՞նդ են և անչ իստակալութեանց բաժնուածներ :

3—Կարսոյ, կուսակալութեանը Մեծ Հայոց ո՞ր նահանգներնեն կը բաղկանայ, որո՞նդ են իւր գլխաւոր տաղաները : Կարսոյ ի՞նչ ո՞րու ունի և ո՞րպէս բնույթն էնո՞նչ արել կան ոսրա մէջ : Ուրիշ է՞նչ բերելէի իւր այս տաղաներ :

4—Վանայ կուսակալութեանը Մեծ Հայոց ո՞ր մասի շրջան կ'ինայ, որո՞նդ են իւր նշանաւոր լեռներ, Ջեր,

բներքն ու հանեւեր : Վանայ, ժողվ մէջ ունի կազմ կոյ, : Այս նահանգի նշանաւոր վանեւեր ու աղաժներ որո՞նտ են : Վան աղաժը ո՞րուած բնակիւ ունի, ունի եկեղեց, վորածուն և ի՞նչ արհեստներ կան իւր մէջ :

5—Հետարքի կուսակալունեւուը ՄԵՇ Հայոց ո՞ր նահանքներն իւր կազմուու : Ի՞նչ աշխանդիւներ կան սորո մէջ և ի՞նչո՞վ իւր պարապին :

Հետարքի գլխաւոր աղաժներ որո՞նուն և ի՞նչ էնելիւն կայ իւր վրայ :

6—Բաղկաց, կուսակալունեւուը ՄԵՇ Հայոց ո՞ր մասերու վրայ իւր պարապուու : Սորո նշանաւոր լւսաներ և գետեր որո՞նուն են : Ի՞նչ բերք և հանեւեր կան այս նահանգի մէջ : Գլխաւոր աղաժներ և վանեւեր որո՞նուն են :

7—Տէրանակերպի կուսակալունեւուը ՄԵՇ Հայոց ո՞ր կոյց կինայ, ի՞նչ գլխաւոր գետեր կան սորո մէջ և ի՞նչ հանեւեր : Ո՞նկ է այս կուսակալունեւու գլխաւոր աղաժը, ո՞րուած բնակիւ ունի : Մնացեալ նշանաւոր աղաժներ և րեզը որո՞նուն են :

8—Խորբերդի մանեւերի նիւնեւուը ՄԵՇ Հայոց ո՞ր նահանգի մէջ կինայ, ո՞րուած բնակիւ ունի : Ո՞նչ ի՞նչ գլխաւոր աղաժը կան սորո մէջ :

ՓՈՐՔ ՀԱՅՔ

1—Փոքր Հայք բաժնուած է՝ ԵՐԵՔ կուսակալութեանց սահմաներու մէջ, ինկիւրի կուսակալութեան կը վերաբերի՝ Առաջին Հայք : Տքաղիզոնի կուսակալութեան՝ Երկուորդ Հայք :

Սեբաստիոյ կամ Սվազի կուսակալութեան՝ Երրորդ Հայք :

Փոքր Հայք այժմ 1,700,000 բնակիչ ունի, որմէ 700,000 Հայ են, մնացեալն՝ Օսմանցի, Յոյն և Հրէայ : Օսմանեան Հայաստանի այս մասին մէջ ըստ բաւականին ծաղկած է արհեստ, վաճառականութիւն և հողագործութիւն : Ունի առատ ցորեն, գինի, բամպակ, մետաքս, ափիոն, ընտիր ծխախոտ և զանազան պտուղներ : Նշանաւոր են այս երկրի ձին, կով, ոչխարն և դոմէշ, կան նաեւ արծաթի, պղնձի, երկաթի և աղի առատ հանքեր :

Փոքր Հայոց գլխաւոր քաղաքներն են՝ Սեբաստիա (Սվազ), Ալիս գետի վրայ հին և անուանի քաղաք է : Նշանաւոր են սորա բերդն ու պարիսպը և սուրբ Նշան եկեղեցին : Արհեստներէն յառաջացած են՝ կտաւագործութիւն եւ երկրագործութիւն : Ունի 22,000 բնակիչ, որմէ երկու երրորդ մասը Հայ են:

Եւգոկիա կամ Թոկաթ, Խրիս գետի վրայ Փոքր Հայոց գեղեցիկ քաղաքներէն մէկն է : Բնակաց թիւն է 20,000: Մաղկած են սորա մէջ վաճառականութիւն և արհեստ . անուանի են այս քաղաքի պղնձի գործարաններ և պղնձէ բանուածներ :

Կեսարիա (Մաժակ), Արդէսս լերան ստորոտ վաճառաշահ քաղաք է, ունի կտակի բազմաթիւ գործարաններ, բնակչաց թիւն է 30,000, որմէ 10,000 Հայ են:

Նիկոպոլիս (Շապին-Դարահիսար), վաճառաշահ և բազմահայ քաղաք է, փոքր և ամուր բերդով:

Ակն, համանուն գետակի վրայ ամուր քաղաք է գեղեցիկ տեսարանով, ունի 10,000 բընակիչ, որոյ կէսը Հայ են Անի քաղաքէն եկած:

Արտակեր, Սուտիտորոս երան ստորոտը արշհաստներով ծաղկեալ քաղաք է. սորա շրջաւ կայք խիստ բարեգեր է և արծաթի հարուստ հանք ունի:

Մելիտինէ (Մալաթիա), պարզաբեր և արդիւնաւոր քաղաք է, մեծ քանակութեամբ կը մշակուի այս տեղը բամպակ և ափոն:

Մնացեալ քաղաքներէն նշանաւոր են՝ Զիւլէ, Նիկոսար, Տիվրիկ, Կիւրիւն, Տէրէստէ, Քեսուն և Ամանուսատ քաղաքները:

ՄԻՋԱԳԵՑՔ ՀԱՅՈՑ

2—Հայոց Միջագետքը այժմ երկու կուսակալութեանց սահմաններու մէջ բաժնուած է. արևմտեան մասը՝ Հալէպի կուսակալութեան,

իսկ արևելեանը՝ Տիդրանակերտի կուսակալութեան կը վերաբերին: Ունի 35,000 բնակիչ որմէ 7,000 հայ են, մնացեալ ը Արաբ, Քիւրտ և Քաղղէացի:

Հայոց Միջագետաց գլխաւոր քաղաքներն են՝

Լիդեսիա կամ Ուռհա, վաճառաշահ և արհեստներով ծաղկեալ քաղաք է, ունի 40,000 բնակիչ որոյ մի մասը Հայ են:

Մէրտին, պարիսամերով շրջապատուած ամսուր քաղաք է, գեղեցիկ շէնքերով և ընդարձակ հրապարակներով լարդ արուած։ Սորա շրջակայքը խաղողի ընտիր այգիներ կան, բնակչաց թիւն է 20,000, որոյ կէսը Հայ են։

Մծբին, երբեմն թագաւորածիստ և անուանի քաղաք էր այժմ մի այն 4,000 բնակիչ ունի։

Հայոց Միջագետաց մէջ նշանաւոր են նաև Սեւանեցակ, Պիլէճիկ և Ռաքքա քաղաքներ։

ԿԻԼԻԿԻԱ

3—Կիլիկիա, կը բաղկանայ Ստանայի և մտսամբ Հալէպի կուսակալութեան երկիրներէն։ Ունի այժմ 500,000 բնակիչ որմէ 200,000 Հայ են, մնացեալ Օսմանցի, Թուն և Գիշէլ թիւրքմէն որ աւազակութեան կը պարապին։

Կիլիկիոյ մէջ Ատանայի կուսակալութեան
վերաբերեալ քաղաքներէն նշանաւոր են՝

Ատանա, Սարոս գետին վրայ Կիլիկիոյ հա-
րուստ և վաճառաշահ քաղաքն է . 30,000 բը-
նակիչ ունի, որոյ մէկ երրորդ մասը Հայ են :
Այս քաղաքը գեղեցիկ պարտէկներ և բարե-
բեր հողեր ունի : Բերքերէն նշանաւոր են՝
բամպակ, բուրդ և սուսամ :

Տարսոն, կուդնոս գետի վրայ վաճառաշահ
և գեղեցիկ քաղաք է, ունի 20,000 բնակիչ :

Մէրսին, Տարսոնի նաւահանգիստն է :
Սիս, Ռուբինեանց տէրութեան մայրաքա-
զաքն էր, այժմնախնի պայծառութենէն մեր-
կացած բազմաթիւ աւերակներ ունի : Այստեղ
է Կիլիկիոյ Կաթուղիկոսութեան աթոռը :

Հալէպի կուսակալութեան կը վերաբերին
Կիլիկիոյ հետևեալ քաղաքները՝

Մարաշ, վաճառաշահ և անուանի քաղաք
է, ունի 20,000 բնակիչ, որոցմէ 11,000 Հայ են :
Այս քաղաքի մէջ ըստ բաւականին յառաջա-
ցած են ոստայնանկութիւն և ներկարարութիւն :

Անթապ, վաճառաշահ և արհեստներով
ծաղկեալ քաղաք է . ունի խիստ բարեբեր հո-
ղեր, առաա բերք և 25,000 բնակիչ, որոցմէ
12,000 Հայ են :

ՕՄԱՆԵԱՆ ՀԱՅՈՒՄ

ԱնԱր ՄՈՒ	օ Տրասկիզոն	օ Կորպուս	օ Վարդակական	օ Կորպուս	օ Վարդակական							
Արմատան	օ Նիկուլաս	օ Կորպուս	օ Վարդակական									
Արմատան	օ Վարդակական											
Արմատան	օ Վարդակական											
Արմատան	օ Վարդակական											

ԶԵՂԹՈՒՆ, լեռներու մէջ շինուած ամուր
քաղաք է, սորա բնակիչները արհեստավոր և
քոջ մարդիկ են ու զլիաւորապէս երկաթա-
դործութեան կը պարապին :

1—Փոքր Հայոց այժմ քանի՞ ճամբրու բաժնուած է և
ո՞ր կուսակալութեանց կը մլրտերէ : Բնակչաց նիւ ո՞րշտէ
է, ո՞րտե՞ են Հայեր : Այս երիբ բերերը որո՞նտ են, ի՞նչ
կը առաջնութեր և հանդեր կան սորտ մէջ :

Փոքր Հայոց գլխաւոր +աղաքներ որո՞նտ են, ո՞րշտէ
բնակիչն ունեն, ի՞նչոցնե ո՞րշտէ Հայ են և ի՞նչ քերելէր
իսպ այս +աղաքաց վրայ :

2—Հայոց Միջադեպէ ո՞ր կուսակալութեանց սահման-
ներու մէջ կինոյ, ի՞նչ ելիստոր աղաքներ կան սորտ մէջ :
Բնակչանուար բնակչաց նիւ ո՞րշտէ է և ո՞րշտէ Հայեր կան
Հայաստանի այս ճամփ մէջ :

Հայոց Միջադեպաց գլխաւոր +աղաքներ որո՞նտ են,
ի՞նչ քերելէր իսպ այս +աղաքաց վրայ : Բնակչաց նիւ ո՞ր-
շտէ է, ո՞րշտէ են Հայեր :

3—Կելէիս այժմ ո՞ր կուսակալութեանց կը մլրտե-
րէ : Արանոյէ կուսակալութեանը կելէիս ո՞ր ճամփ վրայ է
և Հալւդի՞ ո՞րը : Կելէիս բնակչաց նիւ ո՞րշտէ է, ո՞ր-
շտէ են Հայեր, ո՞րո՞ւ ի՞նչ աշխեր կան սորտ մէջ :

Կելէիս գլխաւոր +աղաքներ որո՞նտ են : ո՞րշտէ բնե-
նել ունեն : Արանոյէ և Հալւդի կուսակալութեան վերաբե-
րուաւուներ որո՞նտ են և ի՞նչ քերելէր իսպ նոյս վրայ :

Բ. ՌՈՒՍԻ ՀԱՅԱՍՏԱՆ

1—Ռուսի Հայաստանը կը պարունակէ Մեծ
Հայոց Արցախ, Ալենիք, Ռւտի, Փայտակարան
նահանգները, Գուգարք, Արարատ և Վաս-
պուրական նահանգներու մէկ մասը, օրոնք
հետեւել նահանգներու, նահանգներն էլ
գաւառներու բաժնուած է :

Ա. ԹԻՖԼԻՍԻ նահանգ

Բ. Գանձակի »

Գ. Երևանի »

Դ. Կարսի »

Ե. Բագուտայ »

Ռուսի Հայաստանի այս հինգ նահանգները
կը պարունակեն 2,152,000 բնակիչ, որոցմէ
312,000 Հայ են, մասցեալը՝ Ռուս, Վրացի,
Զէրքէղ, Լէզիկ, Թաթար և ուրիշ զանտղան
ցեղեր :

Ա. ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳ

2—Թիֆլիսի նահանգը կինոյ կուր գետից
դէպի հարաւ, Արցախի արևմտեան և Գուգարք
նահանգի արևելեան մասի վրայ : Այս նա-

հանդը ըստ մեծի մասին լեռնոտ է ծածկուած խիտ առ խիտ անտառներով սառն և հանքային ջրերով։ Դաշտային տեղերն էլ բարեբեր հողեր և առատ բերք ունի. կան նաև արծաթի, պղնձի, և երկաթի հարուստ հանքեր։

Գլխաւոր քաղաքներն են՝

Ախլցխա, կուր գետին մօտ շինուած բերգաքաղաք է։ Ունի 15,000 բնակիչ, որմէ 10,000 չայ են. Արհեստներէն յառաջացած են ոսկերչութիւն և կաշեգործութիւն, նշանաւոր է մանաւանդ սորա ոսկեթել մանուածները։ Այս քաղաքի շրջակայքը խիստ բարեբեր է և հանքային առատ ջրեր կան։

Ախլքալաք, վաճառաշահ քաղաք է, ունի 5,000 բնակիչ որոց մեծագոյն մասը Հայ են։

Բ. ԳԱՆՉԱԿԻ ՆԱՀԱՆԳ

Յ—գանձակի նահանդը կ'ինայ Սիւնեաց, Ուտի նահանդներու և Աքցախի արևելեան մասի վրայ։ Այս երկրի արևմտեան մասը ծածկուած է խիստ բարձր լեռներով, մնացեալ տեղերը դաշտային է։ Ունի բազմաթիւ գետեր, վտակներ, որք կը թափին կուր և երասխ դեմերու և Սևանայ լճի մէջ։

Գանձակի նահանդը հարուստ է բարեխառն և ջերմկլիմայի տակ աճող բոյսերով և կենդանիներով։ Մեծ քանակութեամբ կը մշակուի՝ ցորեն, գարի, խազող և զանազան պտուղներ։ կան արծաթի, երկաթի, աղի և քարածուխի հարուստ հանքեր։

Այս նահանդի մէջն է Գարապաղը, որոյ բնակիչները խակզբանէ անտիհեր ու քաջ մարդիկ եղած են։ Սորա մէջ երբեմն նշանաւոր քաղաքներ ու վանքեր կային, այժմ մեծ մարամբ աւերակ և անյայտ կը մնան։

Գլխաւոր քաղաքներն են՝

Գանձակ, համանուն վտակի մօտ շինուած վաճառաշահ քաղաք է, ունի 10,000 բնակիչ, որոյ կէսը Հայ են։ Այս քաղաքի մէջ մետաքսի բաղմաթիւ գործարաններ կան։

Շուշի, բերդաքաղաք է, ամուր պարիսպներով շրջապատուած, բնակչաց թիւն է 25,000։ Նշանաւոր է այս քաղաքի Հռոմեոք դպրոցն և տպարաննը։

Գ. ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳ

4—Երեւանի նահանդը կը տարածի Արտաշատի արևելեան և Սիւնեաց արևմտեան մասեւ

ըու վրայ : Սորա մէջէն կ'անցնի Երասմիս դետք .
այստեղ է Մասիս , Հայաստանի ամենաբարձր
լեռը , Փոքր Մասիս , Արագած և Գեղամայ լե-
րանց շղթաներ : Ունի ընտիր և բարեբեր դաշ-
տեր , առատ բերք , գեղեցիկ և բաղմատեսակ
պտուղներ , առաւել վայրի և ընտանի անթիւ
կենդանիք իւր բարձրաբերձ լերանց , խորա-
փոր ձորերու , անտառաց , ընդարձակ և բաղ-
մարօտ դաշտերու մէջ :

Այս նահանգը հարուստ է նաև պատմական
հնութիւններով , յիշատակներով : Նշանաւոր
էին սորա հոյակապ տաճարներ , վանքեր , գե-
ղեցիկ և բաղմամարդք քաղաքներ , որոյմէ շա-
աերք այժմ կիսակործան կը մնան և շատերի
հետքն անդամչերեկի :

Գլխաւոր քաղաքներն են :

Երևան , Հրազդան գետի վրայ նշանաւոր
և վաճառաշահ քաղաք է . ունի 14,000 բնակիչ
որոյ կէսը Հայ են :

Այս քաղաքիս մօտ է Ս . Էջմիածնի վանքը ,
մեր Ազգի նույիրական ուխտատեղին , ուր կը
նստի Հայոց ընդհանրական Կաթողիկոսը
Պ . Սինողը վանական Հարց բաղմաթիւ անդամ-
ներով : Այս վասուց մէջ կայ մեծ և հարուստ
թանգարան , մատենադարան , տպարան և գե-

որքեան Ճեմարան 200 աշակերտներով : Նշա-
նաւոր է կ'միածնի անտառն և կոփածոյ քա-
րերով շինուած լիճն :

Այս վասուց շուրջը կան՝ Հոփիսիմէի ,
Գայիանէի , և Շողակաթի վանքերը , Վաղարշա-
պատ , որ գիւղաքաղաք է և օրէցօր կը բազ-
մանայ . նաև Դուխն , Արտաշատ և Արմաւիր
քաղաքի աւերակներն ,

Կիւմրի (Ալէքսանդրապոլ) , Ախուրեան գե-
տի վրայ շինուած նշանաւոր քաղաք է , ունի
20,000 բնակիչ , որոյ մեծագոյն մասը Հայ են :

Նախիջևան , համանուն գետի վրայ շի-
նուած վաճառաշահ քաղաք է . բնակչաց
թիւն է 7,000 : Այս քաղաքին մօտ նշանաւոր
աղահանք կայ :

Օրտուպատ , Երասմի գետի վրայ շինուած
քաղաք է , զարդարուած գեղեցիկ այգիներով
և պտուղներով , ունի 3,500 բնակիչ :

Աղուլիս , այս Աւանը երկու մաս կը բաժ-
նուի վերին և ներքին Աղուլիս , որ անուանի է
բնակչաց ճարպիկ վաճառականութեամբ :

Դ . ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԻ

5—Կալորի նահանգը կը տարածի՝ Տայք ,
Գուգարք նահանգներու և Արտաշի արևմէ-

տեան մասի վրայ : Այս նահանգը շրջապատուած է մեծ և բարձր լեռներով, սորա մէջն են՝ վանանդայ, Շիրակայ, Շահեօլ և Սօղան լերինք՝ գեղեցիկ ու ծաղկալից հովիտներով, առողջարար և քաղցր օդով ու մեծամեծ անտառներով : Դաշտերէն նշանաւոր են՝ Շիրակայ, վանանդայ, Շարուրայ, Բասենու և Բագրեանդայ ընդարձակ և ամենաբերրի դաշտեր, որք կը ոռողուին երասմին օժանդակող այս երկրի յորդառատ գետերէն և վտակներէն : Հարուստ է նաև ընտանի և վայրի կենդանիներով և աղի առատ հանքերով :

Գլխաւոր քաղաքներն են՝

Կարս, Մատի գետի վրայ ամուր բերդաքաղաք է, ունի 20,000 բնակիչ որոյ կէսը Հայ են, Սորա մօտ է Անի քաղաքի աւերակները : Կաղզուան, համանուն գաւառի քաղաքն է, այդիներով շրջապատուած, սորա մօտ աղի առատ հանք կայ :

Օլթի, Ճորոխ գետի մի վտակի վրայ շենուած գիւղաքաղաք է :

Արտահան, փոքրիկ բերդաքաղաք է, կուր գետի վրայ, ունի 800 տուն բնակիչ :

Նշանաւոր են նաև Արտահանուշ և Արթվին գիւղաքաղաքներ :

Ե. ԲԱՐԱՒՄՅԱՅ ՆԱՀԱՆԴ

6—Բագուայ նահանգը Մեծ Հայոց Փոյտակարան նահանգի մէջն է : Սորա դերքը դաշտային է, գեղեցիկ արօններով ծածկուած : Այս նահանգի մէջէն կ'անցնի կուր գետ, որ գարնան ժամանակ մեծնալով դաշտերը կը ողողէ : Նշանաւոր են սորա նութիւն և աղի հանքերը :

Գլխաւոր քաղաքներն են՝

Բագուա, կասպից ծովի նզերք նշանաւոր և վաճառաշահ քաղաք է, ունի նաւթիւն առատ հանք և 15,000 բնակիչ : Այս քաղաքին մօտ կրակապաշտ պարուիներ կան :

Լէնքօրան, ծովի գերեւայ վաճառաշահ քաղաք է :

1—Ռուսուի Հայաստանը Մեծ Հայոց ո՞ր կուլը ի՞նչայ և ո՞ր նահանգներու մէջ : Խոնչնշանաւոր լեռներ, գետեր ունի : Գլխաւոր գաղաներ որո՞նտ են և ո՞րը բնակիւն նոց աչշ, ի՞նոցանե ո՞րը է Հայ են :

2—Բէջլեսի նահանգը Մեծ Հայոց ո՞ր նահանգներու մէջ էնտոյ, Խոնչքիւն ունի : Գլխաւոր գաղաներ որո՞նտ են և ո՞րը բնակիւն հայ նոց մէջ :

5—Գանյակի նահանջը Մեծ Հայոց ո՞ր կողմէն կ'ինայ,
ո՞ր նահանջներու մէջ: Ի՞նչ նշանաւոր լվաներ, գետեր
ունի. դաղսուերէն որո՞նք նշանաւոր են:

4—Երևանի նահանջը Այս նեաց և Արարատի ո՞ր կողմէն
կ'ինայ: Նշանաւոր լվաներ, գետեր ու շաշրեր որո՞նք են,
Այս նահանջը պարագան է օն հունիսներ ունի: Եղիս-
աբն ո՞ր դաղսուերն օն կ'ինայ: Ի՞նչ ժերելելի կա այս վա-
նաց վրայ: Եղիտանի շրջապատի վաներ և աւետի ժո-
ղուժներ որո՞նք են: Ուրեմն է՞ն և աղավներ կան այս նահանջի
մէջ:

5—Կարսի նահանջը Մեծ Հայոց ո՞ր նահանջաց մէջ կ'ի-
նայ. Նշանաւոր լվաներ, գետեր, գալութեր, ժլութեր
դաղսուեր որո՞նք են և ո՞րպէս բնակիւ ունին:

6—Բարբուռաց նահանջը Մեծ Հայոց ո՞ր կողմէն կ'ինայ,
ո՞ր նահանջի մէջ և ո՞ր ժողովուրտ: Այս նահանջը օն ա-
րելի և օն նշանաւոր դաղսուերն ու հանելի ունի:

Պ. ՊԱՐՍԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ

1—Պարսից Հայաստանը կը պարունակէ
Վարպետականի և կորդուաց նահանջներու
արեւելքան մասը և Պարսկահայք գաւառը, ո-
րոնք ի միասին կը կազմեն մի կուսակալութիւն
որ Արդպատականի կուսակալութիւն կ'անուա-

Ա. ԱԹԵԱՏԱՆ

ՀԻՒՄԱՆ

Ա	Արմավազ	◎ Թիգրամ	○ Ակեթու
Յ	Արմավազ	○ Ճէմալ Օղլու	○ Նորիս
Ջ	Արմավազ	◎ Զըմբ: Լիճ	
Շ	Արմավազ	○ Վիրմի	○ Ակեթու
Գ	Գ		
Շ	Օլթի	○ Անդ Արաբաշ Լը- մա ը	○ Վահճակ
Ա	Անդ	○ Երևան Հ- մա ը	○ Գահճակ
Խ	Անդ	○ Երևան Հ- մա ը	○ Լիճքրան
Ն	Անդ	○ Արտանու:	
Ը	Անդ	○ Արտանու:	○ Արտանու:
Ծ	Անդ	○ Անդիմանդ	Հարթե
Ը	Անդ	○ Անդիմանդ	
Ծ	Անդ	○ Անդիմանդ	
Ը	Անդ	○ Անդիմանդ	
Ծ	Անդ	○ Անդիմանդ	
Ը	Անդ	○ Անդիմանդ	

Գ. ԼԳՎԱՋԱՆ

Նի : Բնակչաց թիւն է 500,000, որմէ 75,000
Հայ են, մասցեալք՝ Պարսիկ, Ասորի, Ֆիւրտ
և Հրէեայ :

2—Ատրպատականի նահանգը Մեծ Հայոց
արգաւանդ և ջրաւէտ Երկիրներէն մէկն է,
Ունի մեծամեծ լեռներ, ընդարձակ և բարե-
բեր դաշտեր, այդիներ, ծառառտան, մանա-
ւանդ հարաւ արև մոռեան կողմի վրայ և Սալ-
մաստ դաւառի մէջ : Հսրուստ է մանաւանդ
վայրի և ընտիր կենդանիներով, Երկաթի և
աղի հանքերով :

Գլխաւոր քաղաքներն են՝

Խոյ, Կաբմիք գետի եզերքը վաճառաշահ
քաղաք է, մօտ 30,000 բնակիչ ունի : Այս քա-
ղաքին մերձ է Փօթուր (Կոտորոց բերդ) գիւ-
ղաքաղաք :

Որմի, համանուն լճի եզերքը ընդարձակ
և այդիներով զարգալուած քաղաք է. ունի
20,000 բնակիչ :

Տիլիման, Պալմաստ դաւառի քաղաքն է,
համանուն գետի վրայ շնուրած :

Մարանդ, համանուն դաւառի գլխաւոր
քաղաքն է, ունի 10,000 բնակիչ :

ՊԱՐՍԻՅՑ ՀԱՅՈՒՄԱՆ

Ա	Բ	Վ	Ռ	Ս	Դ	Ց	Ւ	Չ	Ր	Ո	Ո	Ջ	Վ	Հ	Ր	Ո	Վ	Վ	Ջ	Վ	Ե
● Վաղարշակ	● Ջաղուազ	● Արդարական	● Վարդան	● Պետրոս	● Գևորգ	● Գրիգոր	● Արքանդակ	● Անդրանիկ	● Կայու	● Գևորգ	● Կայու	● Վարդակ	● Պատրիարք	● Ջաղուազ	● Վարդան	● Պետրոս	● Վարդան	● Պատրիարք	● Վարդան	● Պատրիարք	● Վարդան

Մակու , տմուր բերդաքաղաք է : Սորա
մօս է՝ Արտազու գաշտը Շաւարշան դիւղը և
թագէի վանքը :

1—Պարսէց Հայաստանը Մեծ Հայոց ո՞ր նահանջներու
մէջ էինաց և ո՞ր կուսակալունեան երկիրն է : Այս նահանջի
մէջ ո՞րպէս բնակին էաց , ինոցանէ ո՞րպէս Հայ են : Ուրիշ
քուն աշխեր կան այս տեղը :

2—Արքապատճեն նահանջը ի՞նչուեա երկիր է , ի՞նչ
ի՞նչուանիներ և հաներ առնի : Ուրիշնեն ո՞րու դլիստար
ժաղանիներ և ո՞րպէս բնակին առնին :

ՎԵՐՋ

Գ . ՄԱՍԻ ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՑԱՆԿ

Նախադիմելիք

Գատմական տեղեկութիւն

ՄԱՍԻ Ա.

Հայաստանի սահմանը , Ցարածութիւնը	9
Հայաստանի մակերեւոյթը	10
Հայաստանի օդը	11
Հայաստանի լեռներ և Հրաբուխները	15
Հայաստանի գետերը	16
Հայաստանի լճերը	18
Հայաստանի դաշտերը	20
Հայաստանի բայսերը	21
Հայաստանի կենդանիները	24
Հայաստանի հանքերը	26

ՄԱՍԻ Բ.

Հին Հայաստանի բաժանումը

Ա . ՄԵԾ ՀԱՅՔ

1—Բարձր Հայք	28
2—Զորբորդ Հայք	33
3—Աղձնիք	36
4—Տուրուբերան	38
5—Մոկք	40

	ԵՐԵՎ
Բ.—Վանայ կուսակալութիւնը	79
Գ.—Հէքարիի կուսակալութիւնը	82
Դ.—Բաղդշի կուսակալութիւնը	85
Ե—Տիգրանակերտի կուսակալութիւնը	85
Զ—Խարբերդի միւթէսէրիֆութիւնը	86
ՓՈՔԲ ՀԱՅՔ	88
ՄԻԶԱԳԵՑՔ ՀԱՅՈՅ	90
ԿԻԼԻԿԻԱ	91
Բ . ՈՈՒՍԻ ՀԱՅԱՍՏԱՆ	
Ա.—Թիֆլիսի նահանգ	95
Բ.—Գանձակի նահանգ	96
Գ.—Երևանի նահանգ	97
Դ.—Կարսի նահանգ	99
Ե—Բագուայ նահանգ	101
Գ . ՊԱՐՍԻՅ ՀԱՅԱՍՏԱՆ	103

Առցովատականի կուսակալութիւն

	ԵՐԵՎ
6—Լորձեայք	41
7—Պարսկահայք	43
8—Վասպուրական	44
9—Սիւնիք	50
10—Արցախ	52
11—Փայտակարան	55
12—Խւափ	54
13—Գուգարք	55
14—Տայք	58
15—Արարատ	59
Բ . ՓՈՔԲ ՀԱՅՔ	64
Ա . Առաջին Հայք	65
Բ . Երկրորդ Հայք	65
Գ . Երրորդ Հայք	67
Գ . ՄԻԶԱԳԵՑՔ ՀԱՅՈՅ	68
Դ . Կիլիկիան	70
Մ Ա Ն Գ .	
Հայաստանի արդի բաժանումը	75
Ա . ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	
ՄԵԾ ՀԱՅՔ	
Ա—Կարնոյ կուսակալութիւնը	76

(910 + 84 + 76 = 968 հանդիսական)

Վրիպակը

Երես	Տող	Այսաւ	Ուղիղ
11	5	ամենաբաձր	ամենաբարձր
14	8	կարսար	կարտար
52	4	գործրաններ	գործարաններ
56	8	Գեղաւունիչ	Գեղաւունիչ
68	16	Միսիքին	Նիսիքին
83	11	Դ.	Դ.
87	6	ընտիր	ընտիր
89	3	Քոքը	Փոքը
90	23	բաժնուած	բաժնուած
92		բախուց	բախուց
93		բախուց պարու	բախուց պարու
101		բախուց զարութեան	բախուց զարութեան
104		Ճաշուած օպուս . ք	

Տաճարական անդամական

39K.

ՀՀ Ազգային գրադարան



NL0248787

ՀՀ Ազգային գրադարան



NL0248786

ՀՀ Ազգային գրադարան



NL0248785

